«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ ***Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում***

Առարկան՝ ***«Ես և շրջակա աշխարհը»***

Հետազոտող ուսուցիչ՝ ***Սյուզաննա Իսակովա***

Ուսումնական հաստատություն՝ ***Երևանի Կոստան Զարյանի անվան թիվ 117 հիմնական դպրոց***

Երևան-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 5

1.1. Ինտեգրված դասընթացի ուսուցման էությունը, առանձնահատկությունները..... 5

1.2. Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացի ուղենիշները 6

ԳԼՈՒԽ 2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 9

2.1. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունը տարրական դասարաններում, ինտեգրման դասընթացի ուսուցման բնորոշումը առարկայի շրջանակներում 9

2.2. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ ինտեգրված դասընթացի ուսուցման մեթոդները 11

ԳԼՈՒԽ 3. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ (ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ)..... 14

3.1. «Մեր հայրենիքը» թեմայի ուսուցանումը բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրման համատեքստում 144

3.2. Նախագծային մեթոդի կիրառումը թեմայի համատեքստում..... 20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է, որ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Հասարակական գիտություններ». «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» և «Հայրենագիտություն» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: Առարկայի միջոցով կայուն հիմք է ապահովվում հետագայում՝ միջին և ավագ դպրոցներում «Բնագիտություն» և «Հասարակություն» առարկաների համար[1]: Չնայած այն հանգամանքին, որ «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ յուրաքանչյուր դասաժամի համար պետք է ընդգծվեն ինտեգրված դասընթացի սահմանները, ինտեգրվող առարկաների՝ տվյալ դասաժամի ընթացքում շոշափվող սահմանները:

Ինտեգրված դասընթացում ուսուցման մանկավարժական գործընթացի կազմակերպման խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրման ընդհանրական տեսագործնական ուսումնասիրություն՝ ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ինտեգրված դասընթացի ուսուցման էությունը, առանձնահատկությունները,
- մատնանշել ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացի ուղենիշները,
- ներկայացնել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունը տարրական դասարաններում, ինտեգրման դասընթացի ուսուցման բնորոշումը առարկայի շրջանակներում,
- ներկայացնել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ ինտեգրված դասընթացի ուսուցման մեթոդները,

[1] ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման Հավելված N 1 «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ», https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

- ներկայացնել «Մեր հայրենիքը» թեմայի ուսուցանումը բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրման համատեքստում,

- դիտարկել նախագծային մեթոդի կիրառումը թեմայի համատեքստում:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է ինտեգրված դասընթացում ուսուցման պայմաններում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (մեր դեպքում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրման պայմաններում) որոշակի տեխնոլոգիայով ուսուցման գործընթացի ապահոված արդյունքները:

Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են թեմայի վերաբերյալ աշխատությունները,
- ուսումնասիրվել են «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասագրքերը,
- սովորողներին առաջադրվել են լրացուցիչ, նախագծային ուսուցման տեխնոլոգիային համապատասխան միջոցներ:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 3 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 24 էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը, գրականության ցանկը):

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Ինտեգրված դասընթացի ուսուցման էությունը, առանձնահատկությունները

Ինտեգրված դասընթացի ուսուցման վերաբերյալ մոտեցումները բազմաթիվ են: Այդ մասին տեսակետներ են արտահայտել մի շարք մանկավարժագետներ, մասնավորապես, Յ. Ա. Կոմենսկին, Յ. Հ. Պեստալոցցին, Վ. Սուխոմլինսկին, Ի. Պ. Պոդլասին: Նրանք արժևորել են ինտեգրված դասընթացները որպես բնույթով զարգացնող, իսկ բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր: Ինտեգրված ուսուցումը ենթադրում է, որ սովորողներին, անկախ ունակություններից, ընձեռվելու է զարգացման լայն հնարավորություններ, մասնավորապես, միջառարկայական կապերի ապահովման միջոցով:

Ինտեգրված ուսուցման գծով մանրամասն ուսումնասիրություններ կատարած Ե. Ա. Եկժանովան, ով համարվում է ՌԴ-ում ուսուցման նոր մեթոդների հիմնադիրը, փաստում է, որ ինտեգրված դասընթացների ուսուցումը հիմնված է կրթության ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ սկզբունքների վրա: Ըստ հեղինակի ինտեգրված ուսուցմանը ներհատուկ է զարգացնող, դաստիարակող բնույթը, որը բովանդակում է սովորողների բարոյական, վարքային նկարագրի ձևավորումը կրթական գործընթացում[2]:

Մեկ այլ հեղինակ, Վ.Վ.Կրաևսկին գտնում է, որ ինտեգրված ուսուցումը կրթության որակի բարձրացման նորագույն ուղի է, և դրա միջոցով հնարավոր է կանխել համաշխարհային բնույթ կրող գերխնդիր, որպիսին է դպրոցականների առաջադիմության անկումը[3]:

Չեն կարող չհամաձայնել վերջին հեղինակի տեսակետի հետ, քանի որ գտնում ենք, որ վեր հանված խնդիրը բազմաշերտ է և ենթադրում է ինչպես տարբեր ոլորտների մասնագետների ներգրավում, այնպես էլ տարբեր ոլորտների ինտեգրում: Միայն այդ դեպքում է հնարավոր հասնել կրթության որակի բարձրացման:

Ա.Մ.Զադոյանը ևս գտնում է, որ կրթության որակի բարձրացման ուղենիշը զարգացման ուսուցման մանկավարժությամբ է սահմանվում, որը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների

---

[2] Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. Текст предоставлен правообладателем http://www.litres.ru Основы интегрированного обучения : пособие для вузов / Е. А. Екжанова, Е. В. Резникова: Дрофа. Москва. 2008., С. 52.

[3] Краевский В. В. Основы педагогики, Учеб. Пособие для студ. Высш. Пед. Учб. Заведений.-2-е изд., испр.-М.: Изд. «Академия» 2005., с. 93.

մշակում, որոնցով պայմաններ կստեղծվեն դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար[4]:

Այնուամենայնիվ պետք է նշել, որ ինտեգրված ուսուցումն իրենից ներկայացնում է բարդ և բազմակողմանի հասկացություն: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ինտեգրված ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչո՞ւ, ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա): Կրթության բովանդակությունը (ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներն (ինչո՞ւ սովորեցնել) իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, եղանակներ: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Այսպիսով՝ ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Տարրական դպրոցում ինտեգրված ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար յուրաքանչյուր ուսուցիչ ամեն մի դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

– ինչպե՞ս հաջող պլանավորել,

– ինչպե՞ս հաջող անցկացնել դասը,

– ինչպե՞ս կանխատեսել արդյունքները,

– ինչպե՞ս հասնել նպատակներին,

– ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բացթողումները:

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն, որոնց կանդրադառնանք հաջորդ ենթահարցերում:

1.2. Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացի ուղենիշները

Ինտեգրված դասընթացի ուսուցման արդյունքում ձևավորվում են օբյեկտների և երևույթների միջև առկա կապերի վերլուծության և համեմատության կարողություններ: Դասը դադարում է լինել միայն սովորելու և վերապատմելու նյութ: Այդպիսով ուսուցիչը խուսափում է սովորողների մոտ ձանձրույթի և հոգնածության առաջացումից: Սրանով մենք ամենևին միտում չունենք թերագնահատել ավանդական ուսուցման մոտեցումները, սակայն պետք է փաստել, որ վաղուց լոկ ավանդական մոտեցումների կիրառումն արդյունավետ չի համարվում:

[4] Զադոյան Ա. Մ. Ինտեգրված ուսուցումը որպես կրթության որակի բարձրացման գործոն, Գյումրի, Գիտական տեղեկագիր. – 2019. – թ. 1. – էջ 83-90:

Ուսուցչակենտրոն մոտեցումից անցումը աշակերտակենտրոն մոտեցման թույլ է տալիս դասին հաղորդել համագործակցային, հետազոտական, ստեղծագործական բնույթ: Սովորողը լայն պատկերացում է կազմում իրեն շրջապատող աշխարհի վերաբերյալ: Ուսուցիչը ևս կարողանում է ինքնադրսևորել: Ինտեգրված ուսուցումը թույլ է տալիս ուսուցչին բացահայտել սովորողների ունակությունները, զարգացնել քննադատական մտածողությունը[5]:

Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական ուղենիշ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:

2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:

3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով:

4. Ուսումնական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից[6]:

Ինտեգրված դասընթացի ուսուցման կարևորագույն բաղադրիչ է համարվում համակարգային մասը: Այն ենթադրում է առանձին հասկացությունների, կանոնների, օրենքների, գաղափարների, մեթոդների, ուսումնառության միջոցների սահմանում: Համակարգային մասի կարևորությունը բխում է նրանից, որ հենց դրանից է կախված ինտեգրման ձևը[7]:

Ինտեգրված ուսուցման կարևորությունը դրսևորվում է նրանում, որ բացառվում է ուսումնական գործընթացում առարկայական սահմանափակումների առկայությունը: Դրա հիմքով էլ ինտեգրված ծրագիրը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով՝

- սովորողների հմտությունների, գիտելիքների զարգացում,
- ուսումնական ծրագրի բոլոր հնարավոր առարկաների միջև կապերի հաստատում,
- դասի ընթացքում այնպիսի գործողությունների կազմակերպում, որոնք թույլ են տալիս ապահովել տարբեր ունակությունների դրսևորում,
- աշակերտակենտրոնության դրսևորում,
- նախագծային ուսուցման տարրերի ներգրավում,

[5] Коноваленко Т.А: Что такое интегрированный урок https://infourok.ru/material.html?mid=108751

[6] Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ (Ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան 2007., էջ 58-59:

[7] Кочеткова О. Н., Быльнова Л. Ю: Интегрированный урок: теория и практика https://www.n-asveta.by/dadatki/int_urok.pdf

- սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման պայմանների ապահովում,

- դասագրքերից զատ այլ տարաբնույթ տեղեկատվական աղբյուրների օգտագործում (առանձնապես կարևորվում է սովորողին ուղղորդել օգտվել ճշգրիտ և արժանահավատ աղբյուրներից, այլ խոսքով, սովորեցնել աշակերտին զտել տեղեկատվությունը):

Ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս դրսևորել ուսուցչի ստեղծագործական ունակությունները, դասի վարումն իրականացնել տրամաբանական փոխկապակցվածության համատեքստում՝ չշեղվելով համակարգային տարրերից, համատեղել ընտրված դիդակտիկ նյութերը դասագրքային և լրացուցիչ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ, ներգրավել այլ ուսուցիչների:

Այս ամենի կիրառման արդյունքում սովորողները հնարավորություն են ունենում դրսևորել իրենց գործնական հմտությունները և ինքնադրսևորվել: Վերջինս նպաստելու է հարմարվողական ընդունակությամբ, ճկուն մտածողությամբ օժտված անհատների ձևավորմանը[8]:

Ամփոփելով ինտեգրված ուսուցման վերաբերյալ տեսամեթոդական հիմքերի վերհանումը՝ փաստենք, որ այն թույլ է տալիս ուսուցչին նպատակային աշխատանքի միջոցով ապահովել աշակերտների կողմից այնպիսի տրամաբանական հաջորդական գործողությունների կատարման, որպիսիք են համեմատումը, ընդհանրացումը, համադրումը, զուգորդումը, դասակարգումը, վերլուծումը: Այսպիսի հաջորդական գործողությունները խորացնում են առարկայի նկատմամբ սովորողների պատկերացումների շրջանակը՝ նյութի լիարժեք և բազմաշերտ ընկալման հիմքով: Վերջնարդյունքն առավել հետաքրքիր ուսումնական գործընթացն է, իսկ աշակերտների մոտ ուսումնական մոտիվացիայի ձևավորումը և զարգացումը ներկայիս կրթական համակարգի կարևորագույն հիմնախնդիրներից է: Ուսուցիչը ինտեգրված ուսուցման իրականացման միջոցով կարողանում է լուծել դիդակտիկայի կարևոր խնդիրը՝ աշակերտների ճանաչողական որակների զարգացումը՝ ուսուցման գործընթացին տալով ստեղծագործական բնույթ:

[8] Кумарин В. Педагогика природосообразности и реформа школы, М.: Изд. «Народное образование», 2004., с.2.

ԳԼՈՒԽ 2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2.1. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունը տարրական դասարաններում, ինտեգրման դասընթացի ուսուցման բնորոշումը առարկայի շրջանակներում

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի հիմնաքարը «ես»-ի գաղափարն է, որի շուրջ կառուցվում է բազմաշերտ իրականությունը՝ ընդլայնելով և բացահայտելով «ես»-ի անձնային առանձնահատկությունները: Տարրական դասարաններում «Ով եմ ես», «Ես և մյուսները», «Ես և բնությունը» և «Ես և տիեզերքը» ինտեգրված դասերը թույլ են տալիս կրտսեր դպրոցական տարիքի սովորողներին ընկալել իրենց շրջապատող աշխարհը՝ փոխադարձ կապվածությունների, փոխկախվածությունների ամբողջականության մեջ:

Ինչպես գիտենք, 2020թ-ին շրջանառության մեջ դրվեցին առարկայական չափորոշիչների նախագծեր, որոնք, արդարացիորեն կարող ենք պնդել, որ էականորեն բարձրացնելու են ուսումնական գործունեության արդյունավետությունը: Առաջարկվող նախագծում ներառված են այս պահին գործող առարկայական ծրագրերի բովանդակային և թեմատիկ բոլոր բաղադրիչները՝ որոշ լրացումներով:

- Հիմնական բովանդակային նորությունները նախատեսվում են բնագիտական բնագավառի թեմաներում, որոնք հարստացվել են փորձարարական, հետազոտական և գործնական գործունեության ձևերով: Ավելացել են որոշ թեմաներ՝ շարժում, ուժեր (ձգում, հրում), էներգիա և այլն: Կան որոշ թեթևացումներ աշխարհագրական թեմաներից, որոնք նախորդ ծրագրում գերակշռում էին:
- Հասարակագիտական թեմաներում բովանդակային փոփոխություններ գրեթե չկան. առավել շեշտադրված է ինքնության, ազգային արժանապատվության, համայնքի, հայրենիքի, դրա մշակույթի և բնության պահպանման և պատասխանատվության վերաբերյալ արժեհամակարգային բաղադրիչը: Առողջ ապրելակերպի վերաբերյալ թեմաներում որոշ շեշտադրումներ կլինեն ծխախոտի վնասակարության, բուլիինգի (հալածանքի) և համաճարակների ժամանակ անհրաժեշտ վարքականոնների վերաբերյալ:
- Չափորոշչում և ծրագրում ներկայացված են և՛ միջառարկայական, և՛ ներառարկայական կապերը՝ ապահովելով ինտեգրված ուսուցումը:

Առարկայի ծրագրով նախատեսված բաժիններում մեծ ուշադրություն է դարձված և ընդգրկուն պարզաբանումներ են տրված թե՛ գործունեության ձևերի նկարագրության, թե՛ խաչվող գաղափարների վերաբերյալ, որպեսզի տարրական դպրոցի ուսուցիչը բնագիտական թեմաներում բավարար աջակցություն ունենա[9]:

Առարկայի բովանդակության հիմքում ընդհանրական խաչվող հասկացություններն են, որոնք իրենցից ներկայացնում են ընդհանրական հասկացություններ տարբեր գիտությունների համար: Դրանք նպաստում են որպեսզի սովորողը կարողանա փոխկապակցել առանձին առարկաներից ստացած գիտելիքները ամբողջականության մեջ: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի տարրական դպրոցի չափորոշչի և ծրագրի նախագծում առանձնակի կարևորություն է տրվել այդ հասկացությունների սահմանմանը: Առանձնացվել են յոթ հիմնարար խաչվող գաղափարներ, որպիսիք են օրինաչափությունները, պատճառ-հետևանքը, համակարգ-մոդելները, էներգիան և նյութը, կառուցվածքը և գործառույթը, կայունությունն ու փոփոխությունը:

Առկա են նաև ընդհանրական գաղափարներ: Դրանք առավել համապատասխան են հասարակագիտական առարկաներին և թեմաներին.

1. Անհատ և հարաբերություններ
2. Ժամանակ և տարածություն
3. Անհատական և մշակութային արտահայտություն

[9] Իրազեկում. «Ես և շրջակա աշխարհը» http://escs.am/am/news/6828?fbclid=IwAR1qWDiz9IC1I5n1BTYFN5NkmU76HnzmWnNgKJqAPDgezyMWsQ_8IcqBgpo

4. Գիտատեխնիկական նորարարություն
5. Գլոբալիզացիա և կայունություն
6. Արդարություն և զարգացում

Այս երկու ցանկով ներկայացված խաչվող հասկացություններն էլ կիրառելի են «Ես և շրջակա աշխարհը» առարկայում՝ որպես ինտեգրված առարկա:

2.2. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ ինտեգրված դասընթացի ուսուցման մեթոդները

Տարրական դասարաններում որպես «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ ինտեգրված դասընթացի ուսուցման մեթոդներ առանձնացրել ենք խաղի և նախագծային ուսուցման մեթոդները: Անդրադառնալով խաղի մեթոդին՝ նշենք, որ տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդումն առավել դյուրին է դառնում ինտերակտիվ մեթոդներով կազմակերպելու դեպքում: Խաղերի միջոցով դասընթացը դառնում է առավել գրավիչ և հետաքրքիր:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչելու իրեն ոչ միայն որպես անհատի, այլև որպես հասարակության անդամի: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը[10]:

Տարրական դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է աշակերտներին ծանոթացնել բնությանը, հաղորդակցվել և համագործակցել միջավայրի հետ, նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցման ձևավորմանը և, իհարկե, ճանաչել իրեն ու իր սեփական օրգանիզմը: Խաղը, որպես կյանքի մոդել, թույլ է տալիս սովորողներին ճանաչել մեծահասակների աշխարհը՝ զարգացնող, զվարճացնող, ուսուցանող, հաղորդակցական, հանգստացնող, ինքնարտահայտման գործառույթների կիրառման միջոցով: Խաղերում կարևորվում են խաղի կանոններին ծանոթացնելը, ինչպես նաև խաղի ինտելեկտուալ, իմացական-ճանաչողական բնույթի ընկալումը[11]:

---

[10] Տողանյան Ն. և ուր. «Ես և շրջակա աշխարհը» 2-4-րդ ուսուցչի ձեռնարկ: Երևան, «ՄԱՆՄԱՐ»: 2013: 79 էջ:

[11] Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Այլընտրանքային մեկնաբանություն: Երևան: «Այռեքս»: 2004: 176 էջ: Մեջբերումն ըստ՝ Նալբանդյան Մ. Է., Ամազարյան Ա. Ն. Խաղի մեթոդի կիրառումը «Ես և շրջակա աշխարհը» դասընթացին, Գյումրի, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Հումանիտար ու հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ , 2020, № 1., էջ 255:

Դասընթացի 2 դասարանի դասերի թեմաները հիմնականում նպատակ ունեն բացահայտել անձին, նրա նախասիրությունները, նպատակները, սովորությունները, նրա փոքր և մեծ ընտանիքը, իրավունքներն ու պարտականությունները, համակեցության կանոնները: Ճանաչել և հոգատար վերաբերմունք դրսևորել շրջապատի նկատմամբ, պահպանել և ներդաշնակ ապրել բնության և նրա բաղադրիչների հետ, ինչպես նաև իմանալ առողջ սնունդի, հիգիենայի կանոնների, վտանգավոր սովորությունների մասին, կարողանա խուսափել վարակներից, գիտենալ երթևեկության կանոնները:

3-րդ դասարանի առանձնացված թեմաների համար նախատեսված խաղերը արդեն ավելի հեշտ է կազմակերպել՝ ելնելով նախորդ տարվա ձեռք բերված փորձից:

4-րդ դասարանի դասագրքում ընդգրկված դասերը պարունակում են գիտական բնույթի մեծածավալ նյութեր՝ տերմիններով ու հասկացություններով հագեցված, որոնց ուսուցումը ուսուցչից հսկայական և բազմաբովանդակ աշխատանք է պահանջում: Այսպես, օրինակ, Երկիր մոլորակը, ռելիեֆի հիմնական ձևերը, մայրցամաքները, օվկիանոսները անցնելիս նպատակահարմար է ընտրել թիմային մրցույթ-խաղի մեթոդը՝ դասերին համապատասխանող հարցերով, նկարելուկներով և այլ բովանդակությամբ փուլերով: Հարցերը պետք է ընդգրկեն նախատեսված ամբողջ թեման, նկարելուկները (ռեբուսներ), վերաբերեն հիմնական տերմիններին և հասկացություններին: Հետաքրքիր են նաև «Ո՞վ ավելի արագ», «Գուշակիր մայրցամաքը (օվկիանոսը)», «Գտիր կեսը» և այլ փուլերով կազմակերպվող աշխարհագրական խաղ-վիկտորինաների անցկացումը[12]:

[12] Ադամյան Ն. Ջուրը գիտելիքների խաչմերուկում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, «Արման Ասմանգուլյան» ԱՁ: 2018թ.: 467 էջ:

Անցում կատարելով նախագծային ուսուցման մեթոդի ներկայացմանը՝ նշենք, որ վերջինս ընդհանրական առմամբ նշանակում է պլանավորում: Որպես ուսուցման մեթոդ հայտնի է որպես «խնդիրների մեթոդ» և լայն կիրառություն ստացել է դեռևս 20-րդ դարում: Այն համարվում է փոխներգործուն մեթոդ և նպաստում է սովորողների ճանաչողական, ինքնուրույն, համագործակցային գործունեության զարգացմանը:

Նախագծերը կազմակերպվում են ըստ մասնակիցների թվի, որի դեպքում նախագիծը լինում է անհատական և խմբային, ինչպես նաև ըստ տևողության՝ կարճաժամկետ (4-6 դաս), միջնաժամկետ (1-4 շաբաթ) և երկարաժամկետ (4 շաբաթից մինչև 1 տարի):

Նախագծերը կյանքի են կոչվում 5 հաջորդական փուլերի իրականացման արդյունքում՝

- նախապատրաստական փուլ, որի ժամանակ ձևավորվում են խմբերի և կատարվում է թեմայի ընտրություն,
- պլանավորման փուլ, որի ընթացքում ձևակերպվում են խնդիրները, մշակվում է պլանը, սահմանվում են ժամկետները և այլն,
- հետազոտական փուլ, որի ընթացքում սովորողներն աշխատում են տեղեկատվական աղբյուրների հետ և կատարում եզրահանգումներ,
- արդյունքների ներկայացման փուլ, որի ընթացքում ներկայացվում են աշխատանքի արդյունքները և քննարկվում են ստացված արդյունքները,
- գնահատման և վերլուծության փուլ, երբ կատարվում է ստացված արդյունքների գնահատում:

Ամփոփելով՝ փաստենք, որ նշված երկու մեթոդներն էլ սովորողներին «դրդում են» գործողության, ինչն էլ ապահովում է ուսումնասիրված կարողությունների ինքնաբերաբար զարգացումը:

ԳԼՈՒԽ 3. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ (ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ)

3.1. «Մեր հայրենիքը» թեմայի ուսուցանումը բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրման համատեքստում

Ինչպես պարզ դարձավ մեր կողմից կատարված տեսամեթոդական ուսումնասիրություններից, տարրական դասարանների առարկայական ծրագրերում առկա են բոլոր միջոցները, որոնք թույլ են տալիս «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում արդյունավետ ինտեգրում իրականացնել: Ուսումնասիրվող առարկայի բազմաթիվ հարցեր խնդրո առարկա են նաև այլ առարկաների դասավանդման գործընթացում[13]:

Հաշվի առնելով վերջին տարիներին մեր առջև ծառացած արհավիրքները՝ ինտեգրված դասընթացի ուսուցման համար ընտրել ենք, թերևս, կարևորագույն «Մեր հայրենիքը» թեման: Նախ կներկայացնենք ինտեգրման իրականացման միջոցները, ապա մեր կողմից ընտրված նախագծային մեթոդով կամրապնդենք աշակերտների ստացած գիտելիքները:

Բնագիտական և հասարակագիտական ոլորտների՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ ինտեգրելու միջոցով «Մեր հայրենիքը» թեմայի դասավանդման արդյունքում սովորողները կճանաչեն Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները, որպիսիք են դրոշը, զինանշանը, պետական օրհներգը, ազգային դրամական միավորը, կթվարկեն Հայաստանի քաղաքները, լճերը, գետերը, լեռները, կկարողանան գտնել դրանք քարտեզի վրա, կմատնանշեն դրանց երկրագիտական և էկոլոգիական առանձնահատկությունները (ապահովելով բնագիտական ոլորտի ինտեգրումը), կճանաչեն հայ ազգային-պետական գործիչների, նրանց գործունեությանը, ստանձնած պարտավորություններին, հիշատակման արժանի նվիրվածությանը (ապահովելով հասարակագիտական ոլորտների ինտեգրումը՝ հենվելով այն գաղափարի վրա, որ հասարակագիտական ոլորտները գիտության առանձին ոլորտներ են մարդու կյանքի մասին, որը կենսագործունեություն է ծավալում հասարակության մեջ):

[13] Բալայան Ա.Ժ., Սարգսյան Գ.Վ., Սադոյան Ա.Ա., Սեյրանյան Ֆ.Կ. Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցիչների համար: - Եր.: Միվապրես, 2019., էջ 19:

Ստորև ներկայացնում ենք ինտեգրված դասի անցկացման պլանը, որը կիրառելու ենք 4-րդ դասարանում «Մեր հայրենիքը» թեման դասավանդելիս:

Դասարան՝ 4-րդ

Գերիշխող առարկա՝ «Ես և շրջակա աշխարհը»

Ինտեգրված ոլորտներ՝ բնագիտական և հասարակագիտական ոլորտներ

Խնդիրները՝

ա) Աշխատանքի կատարման պլանավորում

բ) Նյութերից և ցուցադրական դիդակտիկ նյութերից ճիշտ օգտվելու կարողության զարգացում

գ) Հայրենիքի վերաբերյալ երեխաների կողմից ձեռք բերված գիտելիքների ամրապնդում

դ) Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացում

Կահավորումը թեմային համապատասխան դիդակտիկ նյութեր և այլն.

- աշխատանքային նյութեր և գործիքներ,
- մատիտ, քանոն, մկրատ, սոսինձ,
- սպիտակ և գունավոր թղթեր,
- քարտեզներ, տեսարժան վայրերի լուսանկարներ,
- հարցաշարեր:

Նպատակը.

- Օգնել ընդլայնել գիտելիքները Հայաստանի խարհրդանիշների, բնաշխարհի, քաղաքների և գյուղերի, բնակիչների, պատմության, հայտնի մարդկանց և հերոսների մասին, ձևավորել սեր և պատասխանատվություն սեփական հայրենիքի հանդեպ, նպաստել հայ ինքնության ձևավորմանը:
- Պատկերացում ձևավորել հնում եղած որոշ քաղաքակրթությունների մասին, որոնք հետք են թողել համաշխարհային պատմության մեջ՝ բացատրել, թե ինչպես են մեզ հասել տեղեկություններ այդ մշակույթների մասին[14]:

Որպիսի՞ն են լինելու առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքները.

- Դրսևորել հարգալից, հոգատար, պատասխանատու և անխտրական վերաբերմունք հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչների հանդեպ:
- Նկարագրել ազգային ինքնությունը սահմանող խորհրդանիշներն ու իրադարձությունները՝ անցյալի և ներկայի, տարբերակել իրենց ազգայինը և զարգացնել դրանցից իրենց հուզական կախվածությունը:

[14] Բալայան Ա.Ժ., Սարգսյան Գ.Վ., Սադոյան Ա.Ա., Սեյրանյան Ֆ.Կ. Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցիչների համար: - Եր.: Միվապրես, 2019., էջ 21:

- Կողմնորոշվել տարածքում:
- Ճանաչել իր հայրենիքի բնության և պատմամշակութային արժեքները, գնահատի և խնայող և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերի դրանց հանդեպ:

Թեմայի վերջնարդյունքները.

- Ճանաչել և նկարագրել ՀՀ պետական խորհրդանիշները
- Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ն և ԱՀ-ն, նրանց հարևան պետությունները, ՀՀ վարչական մարզերը և մարզկենտրոնները:
- Թվարկել, Հայաստանի մեծ քաղաքները, գետերը լճերն ու լեռները, նկարագրել Հայաստանի բնաշխարհը ընդհանուր գծերով, թվարկել բնության արգելոցները:
- Ճանաչել և բացատրել ժամանակի գծային բնութը, անցյալի, ներկայի և ապագայի կապը, նկարագրել դրանց հաջորդայնությունը Հայաստանի՝ պատմական նշանակալի որոշ իրադարձությունների, նախնիների և ներկայիս Հայաստանի օրինակով:
- Ճանաչել հայ ժողովրդի ամենահայտնի ազգային-պետական գործիչներին:
- Մեկնաբանել, թե ինչ պարտավորություններ ունեն երկրի բոլոր քաղաքացիները իրենց հայրենիքի հանդեպ:
- Բնութագրել հայրենիքը սիրող, խնայող և պատասխանատու վարքագիծ ունեցող քաղաքացուն, թվարկել որակները և թե ինչպես կարող են իրենք էլ նման քաղաքացի լինել[15]:

«Մեր հայրենիքը» թեմայի դասավանդումն ինտեգրման համատեքստում առավել արդյունավետ իրականացնելու համար սովորողներին բաժանվեցին նախապես կազմված հարցաթերթեր: Դրանց առաջին մասը վերաբերում էր Հայաստան աշխարհի ներկայացմանը բնագիտական տեսանկյունից, մասնավորապես, երկրաբանության և էկոլոգիայի: Պատասխանելով հարցերին աշակերտները մեկնաբանեցին «Հայաստան» անվան ծագումը, նախապես ամրացված քարտեզի վրա ցույց տվեցին մարզերը, մայրաքաղաքը, թվարկեցին ՀՀ պետական խորհրդանիշները: Որոշակի ակնկարկ ներկայացրին ՀՀ էկոլոգիայի, էկոլոգիական հիմնախնդիրների մասին: Նախապես պատրաստված նկարներն ամրացրին քարտեզի վրա այն վայրերում, որտեղ առկա են բնապահպանական լրջագույն խնդիրներ: Օրինակ, մատնանշելով ծառերի կարևորությունը օդի մաքրության հարցում Երևան քաղաքի վրա փակցրին ծառատնկման աշխատանքների նկար:

[15] «Ես և շրջակա աշխարհը» առարկայի տարրական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, նախագիծ, 2020թ., էջ 85-86:

Անցում կատարելով հասարակագիտական ոլորտների ինտեգրմանը՝ պատասխանեցին մեր հայրենիքի պահպանության, պաշտպանության գործում կարևոր դեր ունեցած մարդկանց, նրանց ստանձնած պարտավորությունների, կենսակերպի, վարվելակարգի մասին: Յուրաքանչյուր անձի մասին խոսելիս քարտեզի համապատասխան մարզի վրա փակցրին ազգային-պետական գործչի նկարը: Առանձնակի կարևորություն տրվեց սփյուռքի ներգրավվածությանը և այն ազգային-պետական գործիչներին, ովքեր Հայաստանի պատմության քառուղիներում և ճամփաբաժաններում կարևոր դերակատարում են ունեցել:

Դասն առավել հետաքրքիր դարձնելու նպատակով ընտրեցինք հետևյալ մոտեցումը:

Ուսուցիչ. Երեխանե՛ր, այսօր անսովոր դաս է: Մենք միասին ճանապարհորդելու ենք Երկիր մոլորակով, ուր կա մի հրաշք աշխարհ՝ Հայաստան անվամբ:

Փորձե՞նք ձեր առջև դրված հարցաշարի միջոցով պարզել, թե ինչպիսի վայր է այն: Սկսեցինք:

Աշակերտ. Հայաստանը հայերի երկիրն է:

Աշակերտ. Մեր հայրենիքի անվանումն առաջացել է պատմական Հայասա թագավորությունից:

Աշակերտ. Հայաստանը մի հրաշալի աշխարհ է, ուր միասին հաշտ ու խաղաղ բնակվում են հայերը՝ իրենց կանոններով:

Ուսուցիչ. Երեխանե՛ր, նայենք հաջորդ հարցին: Ի՞նչ կասեք Հայաստանի խորհրդանիշների մասին:

Աշակերտ. Հայաստանի պետական դրոշը:

Աշակերտ. Հայաստանի պետական զինանշանը:

Աշակերտ. Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

Աշակերտներին բաժանվում են նախապես պատրաստված դիդակտիկ նյութերը՝ ՀՀ պետական դրոշի, զինանշանի և պետական օրհներգի նկարազարդված նկարները:

Ուսուցիչ. Երեխանե՛ր, իսկ ինչպիսի՞ն է մեր հայրենիքի բնաշխարհը:

Աշակերտները մոտենում են փակցված քարտեզին, մատնանշում տեղամասերը և ներկայացնում բնաշխարհը: Ներկայացնում են Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական պայմաններն ըստ առանձին մարզերի և Երևան համայնքի, երկրաբանական կառուցվածքը, մակերևույթի ձևերը, լեռնային համակարգի բաղադրիչները, օգտակար հանածոները, բուսական և կենդանական աշխարհը, էկոլոգիայի, բնօգտագործման ու բնապահպանական խնդիրները՝ հնարավորինս պատկերավոր կերպով: Պատկերավորությունն ապահովում են նախապես պատրաստված նկարները, որոնք քարտեզի վրա փակցնելով աշակերտներն էլ ավելի տեսանելի են դարձնում մեր հայրենիքի առանձնահատկությունները և խնդիրները:

Ուսուցիչ. Երեխանե՛ր, ի՞նչ գիտեք մեր հայրենիքի պատմական անցյալի մասին: Նայե՛ք հաջորդ հարցին: Ի՞նչ ուղի է անցել մեր հայրենիքը և ովքե՞ր են նպաստել Հայաստան աշխարհի կայացմանն ու զարգացմանը:

Ուսուցիչը սեղանին է դնում ազգային-պետական գործիչների լուսանկարները և խնդրում երեխաներին ամեն պատմական ժամանակաշրջան նկարագրելիս առանձնացնել նշանավոր ազգային-պետական գործիչներին և փակցնել քարտեզի վրա ըստ նրանց մասին առկա տեղեկությունների: Ուսուցիչը նշում է նաև, որ սփյուռքի ներկայացուցիչների վերաբերյալ տեղեկություններ ևս պետք է ներկայացնել: Երբ աշակերտները ավարտում են նյութի ներկայացումը և նկարների փակցնելը, ուսուցիչը խնդրում է աշակերտներին տալ ազգային-պետական գործիչների անձնային նկարագիրը և դրա հիմքով վեր հանել այն վարքագծային մոդելը, որն էլ պետք է բնորոշ լինի մեզնից յուրաքանչյուրին մեր հայրենիքում ապրելու, հայրենիքին և հայությանն օգուտ տալու համար[16]:

«Մեր հայրենիքը» թեման սերտորեն կապվում է «Ինքնաճանաչում», «Մարդիկ», «Բնություն» հիմնական գաղափարների հետ, այստեղ արծարծվում են և՛ ինքնության, և՛ շրջապատի մարդկանց հետ արդյունավետ շփվելու, և համայնքի, և՛ բնության հետ բոլոր տեսակի առնչությունների վերաբերյալ հարցեր և ամբողջանում են մյուս դասարաններում սկսած թեմաների հանգուցալուծումները[17]: Այստեղ էլ դրսևորվում է բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրումը ուսումնասիրվող առարկայի բովանդակության մեջ:

Բացի այդ նշենք, որ դասընթացի կազմակերպումն իրականացրել ենք «Ես և շրջակա աշխարհը» առարկայի տարրական դպրոցի չափորոշիչ և ծրագիր-նախագծով, որը բավականին արդյունավետ է և հիմնված է նորարարական մոտեցումների վրա:

3.2. Նախագծային մեթոդի կիրառումը թեմայի համատեքստում

Ինչպես արդեն նշել ենք աշխատանքի տեսական մասում, նախագծային մեթոդը կենտրոնական տեղ է զբաղեցնում ուսումնասիրվող առարկաների ուսումնական ծրագրերով նախատեսված թեմաների ուսումնասիրումն ինտեգրման եղանակով իրականացնելու գործում:

«Մեր հայրենիքը» թեմային առնչվող ինտեգրված դասընթացում նախագծային մեթոդի կիրառումը հնարավոր է բազմաթիվ տարբերակներից մեկի ընտրությամբ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնց ժամանակ դասարանը կարելի է «վերածել»՝

1. «Թռչնի թևով» տուրիստական գործակալության, որտեղ Հայաստան ժամանած օտարերկրյա հյուրերին ներկայացվում են մեր երկրի պատմությունը, մշակութային ժառանգությունը, կյանքն ու կենցաղը:

---

[16] Հիմքը՝ «Ես և շրջակա աշխարհը»: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք.- Եր., «Աստղիկ գրատուն», 2009., էջ 121-153:

[17] Ուսուցչի ձեռնարկ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-4-րդ դասարանների համար, Երևան, «Աստղիկ» գրատուն, 2007., էջ 16:

2. «Ինչ կա չկա» գալակտիկայի, որի բնակիչները շատ հետաքրքրված են Երկիր մոլորակի վրա գտնվող այն երկրով, ուր ոտք է դրել Նոյը:

3. «Պետությունների շքերթ» մրցույթի տաղավարի, որտեղ տարբեր պետությունների շարքում առաջին անգամ ներկայացվում է նաև Հայաստանը: Իրենց հայրենիքը ներկայացնող թիմերը վստահ են, որ մրցույթում հաղթելու է մեր երկիրը:

4. «Հայաստանյան հանրագիտարան» ակադեմիայի, որտեղ նյութեր են պատրաստվում ու ներկայացվում Հայաստանի, հայերի ու հայկականի մասին, և արդյունքում ստեղծվում է յուրօրինակ «հանրագիտարան»:

5. «Խոսող պատկերներ» կինոնկարահանման հրապարակի, որտեղ սովորողները 4-6 հոգանոց խմբերում բաշխում են դերերը՝ սցենարիստ, ռեժիսոր, նկարիչ, երաժիշտ, դերասաններ և այլն: Յուրաքանչյուր խումբ «ստեղծում է» վավերագրական ֆիլմ Հայաստանի մասին[18]:

Այժմ ներկայացնենք նախագծային աշխատանքի մեր օրինակը «Մեր հայրենիքը» թեմայի շրջանակներում: ***Թեմատիկ խումբ՝*** Մարդը և հայրենիքը

Նախագծի թեմա՝ Մեր հայրենիքը

Հիմնական գաղափար. հայրենիքը միակն է – Հայաստանը, և մենք ենք նրա տերն ու պաշտպանը:

Նպատակը. Հայրենիքի բացարձակ արժեք լինելու գաղափարի գիտակցումը և դրան համարժեք վարվելակարգի ձևավորումը:

Ակնկալվող արդյունքները. Սովորողները.

- կիմանան մեր հայրենիքի անվան ծագումնաբանությունը,

- կիմանան հայրենիքի, որպես բացարձակ արժեքի, կարևորությունը յուրաքանչյուրիս կյանքում և կկարևորեն յուրաքանչյուր անձի դերը հայրենիքի կայացման գործում,

- կկարևորեն ինչպես բնության, այնպես էլ հասարակության հանդեպ վերաբերմունքը որպես հայրենիքի հզորացման գործիք,

- կգիտակցեն, որ մեր հայրենիքը որքան էլ վիրավոր, միակն է մեր կյանքում և մեզ է բաժին հասել դժվարին կերտման բովով անցնելուց հետո,

- կկարողանան իրենց գործողություններում գիտակցված ընտրություն կատարել:

Հարցեր.

- Որտեղի՞ց է ծագել մեր հայրենիքի անունը:

- Ինչպիսի՞ պատմական զարգացում է ապրել մեր հայրենիքը:

---

[18] Բալայան Ա.Ժ., Սարգսյան Գ.Վ., Սադոյան Ա.Ա., Սեյրանյան Ֆ.Կ. Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցիչների համար: - Եր.: Միվապրես, 2019., էջ 19:

- Ինչպիսի՞ն է Հայաստանի բնաշխարհը (երկրաբանական և էկոլոգիական մոտեցում):

- Ովքե՞ր են մեծ ավանդ ունեցել Հայաստան աշխարհի կայացման գործում:

- Ինչպիսի՞ն է ազգային-պետական գործիչների, որպես հայրենիքի կերտման գործում կարևոր դեր ունեցած անձանց, դիմագիծը:

- Ի՞նչ պետք է ժառանգել նրանցից:

Նախագիծը վարելու համար կազմվում է աղյուսակ՝

Քայլ	Գործողություն	Ժամանակ

Սահմանվում են օգտագործված աղբյուրները՝

Գիրք, ամսագիր, տեսանյութ, համացանց	Հեղինակ	Տարեթիվ/Հրատ.թիվ

Կատարվում են ընթացիկ գրառումներ՝

Ամսաթիվ	Եզրահանգումներ, դիտարկումներ

Այս բոլոր աշխատանքների կատարումից, հարցերին պատասխանելուց հետո սովորողները պատրաստում են սահիկահանդես, որտեղ ներկայացնում են ողջ նախագիծը: Առանձին խմբերի աշխատանքների ամփոփումից հետո պարզում ենք, որ սովորողները բոլորն էլ հայրենիքը համարում են գերագույն և բացարձակ արժեք: Հայրենիքի պաշտպանությունը համարում են սուրբ գործ, որն այսօր իրականացնում են հայ զինվորները: Իրենց համարում են հայրենիքի պաշտպանությունն իրականացնող հաջորդ սերունդ, որը կրելու է ազգային-պետական գործիչներին բնորոշ բոլոր ցայտուն, հօգուտ հայրենյաց դրսևորվող գծերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ամփոփելով փաստենք, որ ինտեգրված ուսուցման միջոցով ապահովվում է դասավանդման նոր մակարդակ: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրանում է տարբեր առարկաներից գիտելիքների, ուսումնական նյութերի և տեխնոլոգիաների միասնացման ճանապարհով: Տարրական դասարաններում ինտեգրումը երեխաների մտավոր ներուժի բացահայտման և ըստ ամենայնի զարգացման լուրջ հնարավորություններ է ընձեռում: Իրականության տարբեր երևույթների և ուսումնական առանձին առարկայի կտրվածքով ընդունված դրույթների մեկուսացված դիտարկումից անցում է կատարվում համակարգված և ամբողջական ուսումնասիրության:

Ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը և կատարելով գործնական ուսումնասիրություններ՝ մենք վեր հանեցինք ինտեգրված դասերի մի շարք առավելություններ: Լինելով ուսուցման նորարարական ձև՝ այս տիպի դասերը հնարավորություն են տալիս մեկ դասի շրջանակներում միավորել տարբեր թեմաներ, տարբեր առարկաներից և դրանք ներկայացնել աշակերտներին՝ որպես մեկ ամբողջություն: Ինտեգրված դասերում գերակշռում է այն գաղափարը, որ աշխարհում ամեն ինչ կապի մեջ է և միասնական: Նմանատիպ դասերը հիմք են ընդունում աշակերտների կարիքները, փորձը, հետաքրքրությունները, իրենց բնույթով աշակերտակենտրոն են և նպաստում են նաև ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը:

Վերլուծությունը ցույց տվեց, որ «Մեր հայրենիքը» թեման սերտորեն կապվում է «Ինքնաճանաչում», «Մարդիկ», «Բնություն» հիմնական գաղափարների հետ, այստեղ արծարծվում են և՛ ինքնության, և՛ շրջապատի մարդկանց հետ արդյունավետ շփվելու, և համայնքի, և՛ բնության հետ բոլոր տեսակի առնչությունների վերաբերյալ հարցեր և ամբողջանում են մյուս դասարաններում սկսած թեմաների հանգուցալուծումները: Այստեղ էլ դրսևորվում է բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրումը ուսումնասիրվող առարկայի բովանդակության մեջ:

Հիմք ընդունելով աշխատանքում կատարված ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք՝

- Առանձնակի նշանակություն տալ ինտեգրված դասընթացի ուսուցման շրջանակներում նախագծային մեթոդի գործուն կիրառմանը: Չնայած այն հանգամանքին, որ այս մեթոդը մասնագիտական գրականության մեջ քննության է

առնվել դեռևս 20-րդ դարում, այնուամենայնիվ, հայկական դպրոցներում միայն վերջերս է սկսել կիրառվել: Մեթոդի արդյունավետ ներդրման նպատակով, կարծում ենք, որ պետք է անցկացվել դասընթացներ և ուսուցիչներին տրամադրվեն մեթոդի միջոցով դասի կազմակերպման բոլոր հնարավոր և անհրաժեշտ ցուցումները: Կարծում ենք նաև, որ դասալսումների միջոցով պետք է ստուգվի մեթոդի ճշգրիտ կենսագործումը:

- Մեր աշխատանքում ներկայացված դիդակտիկ նյութերի ապահովման գործում մեծ է ուսուցչի դերակատարումը: Հաճախ վերջինս իր սեփական միջոցների հաշվին է ապահովում այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են, մասնավորապես, ինտեգրված դասընթացի ուսուցման կազմակերպման համար: Կարծում ենք, որ պատկան մարմինների կողմից դպրոցներին պետք է հատկացվեն միջոցներ դիդակտիկ նյութերի ձեռքբերման համար: Գտնում ենք նաև, որ այդ միջոցները կարող են դպրոցներին տրամադրվել վերջիններիս կողմից պատկան մարմիններին պահանջագրեր ներկայացնելու միջոցով:

- Ինտեգրված դասընթացի ուսուցման ապահովումն առանց տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նվազ արդյունավետ է: Կարծում ենք, որ, հատկապես, «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում համակարգիչների և համապատասխան ապահովումների առկայությունը պարտադիր պահանջ պետք է դառնա Հանրապետության բոլոր դպրոցներում: Սա թույլ կտա սովորողներին առավել տեսանելի կերպով ներկայացնել կապը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի և այլ, բնագիտական և հասարակագիտական ոլորտների միջև: Ասվածի առավել արդյունավետ կենսագործման նպատակով առաջարկում ենք նաև ստեղծել դպրոցների կապակցման ցանց, որտեղ ուսուցիչները և աշակերտները կկիսվեն իրենց արդյունքներով: Ժամանակային առումով ՏՀՏ-ներից առավել վաղ օգտվելու հնարավորություն ունեցող ուսուցիչները ցանցը կծառայեցնեն փորձի և գիտելիքների փոխանակմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ադամյան Ն. Ջուրը գիտելիքների խաչմերուկում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, «Արման Ասմանգուլյան» ԱՁ: 2018թ.: 467 էջ:
2. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Այլընտրանքային մեկնաբանություն: Երևան: «Այռեքս»: 2004: 176 էջ:
3. Բալայան Ա.Ժ., Սարգսյան Գ.Վ., Սադոյան Ա.Ա., Սեյրանյան Ֆ.Կ. Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցիչների համար: - Եր.: Միվապրես, 2019., էջ 19:
4. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ (Ձեռնարկ ուսուցրիչների համար), Երևան 2007., էջ 58-59:
5. «Ես և շրջակա աշխարհը»: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք.- Եր., «Աստղիկ գրատուն», 2009., էջ 121-153:
6. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի տարրական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, նախագիծ, 2020թ., էջ 85-86:
7. Զաղոյան Ա. Մ. Ինտեգրված ուսուցումը որպես կրթության որակի բարձրացման գործոն, Գյումրի, Գիտական տեղեկագիր. – 2019. – թ. 1. – էջ 83-90:
8. Իրազեկում. «Ես և շրջակա աշխարհը» http://escs.am/am/news/6828?fbclid=IwAR1qWDiz9IC1I5n1BTYFN5NkmU76HnzmWnNgKJqAPDgezyMWsQ_8lcqBgpo
9. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման Հավելված N 1 «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգ», https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
10. Նալբանդյան Մ. Է., Ամազարյան Ա. Ն. Խաղի մեթոդի կիրառումը «Ես և շրջակա աշխարհը» դասընթացին, Գյումրի, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Հումանիտար ու հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ , 2020, № 1., էջ 255:
11. Տողանյան Ն. և ուր. «Ես և շրջակա աշխարհը» 2-4-րդ ուսուցչի ձեռնարկ: Երևան, «ՄԱՆՄԱՐ»: 2013: 79 էջ:
12. Ուսուցչի ձեռնարկ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-4-րդ դասարանների համար, Երևան, «Աստղիկ» գրատուն, 2007., էջ 16:
13. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. Текст предоставлен правообладателем http://www.litres.ru Основы интегрированного обучения : пособие для вузов / Е. А. Екжанова, Е. В. Резникова: Дрофа. Москва. 2008., С. 52.
14. Коноваленко Т.А: Что такое интегрированный урок https://infourok.ru/material.html?mid=108751
15. Кочеткова О. Н., Быльнова Л. Ю: Интегрированный урок: теория и практика https://www.n-asveta.by/dadatki/int_urok.pdf
16. Краевский В. В. Основы педагогики, Учеб. Пособие для студ. Высш. Пед. Учб. Заведений.-2-е изд., испр.-М.: Изд. «Академия» 2005., с. 93.
17. Кумарин В. Педагогика природосообразности и реформа школы, М.: Изд. «Народное образование», 2004., с.2.